Հարգելի՛ ընթերցող.

ԵՊՀ հայագիտական հետազոտությունների ինստիտուտը, չհետապնդելով որևէ եկամուտ, իր կայքերում ներկայացնելով հայագիտական հրատարակություններ, նպատակ ունի հանրությանն ավելի հասանելի դարձնել այդ ուսումնասիրությունները:

Մենք շնորհակալություն ենք հայտնում հայագիտական աշխատասիրությունների հեղինակներին, հրատարակիչներին:

Մեր կոնտակտները՝

Պաշտոնական կայք՝ ***http://www.armin.am***

էլ. փոստ՝ ***info@armin.am***

ՌՈՊԵՐ ԿԻԼՊԷՆԿԵԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳԻՏՈՒԹԻՒՆՆԵՐԻ
ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ

ԷՋԵՐ ՀԱՅ ԳԱՂԹԱՎԱՅՐԵՐԻ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ

ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՄԲ՝
ՓՐՈՖ. Վ. Բ. ԲԱՐԽՈՒԴԱՐԵԱՆԻ
ԵՒ
ԴՈԿՏ. ՋԱՒԷՆ ԵԿԱՒԵԱՆԻ

ԵՐԵՒԱՆ - 1996 Թ.

ՆՈՒԻՐՎՈՒՄ Է
ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳԻՏՈՒԹԻՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ
ԱՐՏԱՍԱՀՄԱՆԵԱՆ ԱՆԴԱՄ
ՌՈՊԵՐ ԿԻՒԼՊԷՆԿԵԱՆԻ
ԾՆՆԴԵԱՆ 70-ԱՄԵԱԿԻՆ

Artwork & Typesetting
Tabakian Press
13460 Rangoon St. Arleta, CA. 91331
Tel. (818)997-8535, Fax (818)988-8331
U.S.A.

Printed by Gráfica de Coimbra, L.td
Palheira - Assafarge - 3000 COIMBRA
Tel. (39)438107, Fax (39)438030
PORTUGAL

ՀԱՅԿԱԿԱՆ ԱՐՏԱԳԱՂԹԵՐԸ
(6 - 19-ՐԴ ԴԴ.)

Վ. ՄԻՔԱՅԷԼԵԱՆ

Հայ ժողովուրդի պատմութիւնը, խորը միջնադարից սկսած, նաեւ գաղութահայ զանգուածների կամ հայ գաղթականութեան պատմութիւն է: Առանց վերջինիս ըստ արժանւոյն լուսաբանման խօսք չի կարող լինել հայ ժողովուրդի ամբողջական պատմութեան ստեղծման մասին: Բայց հայ գաղթականութեան կամ գաղթահայ աշխարհի պատմութիւնը ինքնին պահանջում է խոր լուսաբանութեան առարկայ դարձնել գաղթաշխարհի առաջացումը պայմանաւորող երեւոյթի՝ հայկական արտագաղթի պատմութիւնը:

Ժողովուրդների, այդ թւում նաեւ հայ ժողովուրդի վերաբնակումներն ու արտագաղթերը սահմնորոշւում են երկու գործոններով, որոնք կարելի է բնորոշել որպէս շարժիչ եւ ուղղութիւն ցոյց տուող ուժեր. մի դէպքում գործ ունենք արտագաղթի մղող, իսկ միւսում՝ նրա ուղղութիւնը մատնանշող պատճառների հետ: Վերջիններս միմեանցից տարբեր են. կայ պատճառների մի խումբ, որը տուեալ երկրի կամ մարզի բնիկներին ստիպում է թողնել հայրենի տարածքները, բայց կայ պատճառների բոլորովին այլ խումբ, որը գաղթի դիմած բնակչութեանը մղում է ընտրելու իր շարժընթացի յատկապէս այս, բայց ոչ այլ ուղղութիւնը: Սակայն քիչ չեն նաեւ դէպքերը, երբ գաղթի ուղղութիւնը, այսինքն այն տարածքը, ուր պէտք է գնայ-հանգրուանի գաղթականական հոսանքը, մարդկանց գոյատեւման համար իր ունեցած քիչ թէ շատ նպաստաւոր պայմաններով ինքն է դառնում արտագաղթը խթանող գործօն: Այլ կերպ ասած՝ որպէս կանոն արտագաղթի դիմած բնակչութիւնը ինչ որ չափով նախապէս գիտէ նաեւ իր շարժի ուղղութիւնը: Սա, իհարկէ, պարտադիր կանոն չէ:

Ժողովուրդների արտագաղթերը իրենց նպատակամիտուածութեամբ լինում են խստիւս տարբեր: Միջնադարից յայտնի են ժողովուրդների գաղթերի շատ օրինակներ, որոնք ընթացել են այլ ժողովուրդներ կողոպտելու, նրանց

տարածքները բռնագրաւելու նպատակով: Որպէս կանոն նման բովանդակութիւն ունէին վաչկատուն ժողովուրդների տեղաշարժերը Ալթայից ու Միջին Ասիայից դէպի Փոքր Ասիա եւ առհասարակ Արեւմուտք:

Իրենց բովանդակութեամբ եւ դրդիչ ուժերով բոլորովին այլ պատկեր ունէին հայկական արտագաղթերը: Սրանց օբյեկտիւ պատճառները թաքնուած էին ինչպէս երկրի արտաքին քաղաքական դրութեան, այնպէս էլ նրա ներքին, սոցեալ-տնտեսական զարգացման մէջ:

Հանդիսանալով հայ ժողովուրդի պատմութեան իւրօրինակ կողմերից մէկը, նրան հաղորդելով բոլորովին այլ երանգ ու բովանդակութիւն, հայկական արտագաղթերն ու գաղթավայրերի առաջացումը, որպէս համազգային ընդգրկման երեւոյթներ, յատկապէս ուժգնօրէն ծաւալուեցին քրիստոնէութեան ընդունմանը յաջորդած դարերում, մանաւանդ արաբական արշաւանքներից ի վեր: Հաւանաբար, արտագաղթի հիմնական պատճառներին զուգընթաց, որոնք կը նշուեն ստորեւ, կարեւորուել է նաեւ այն հանգամանքը, որ դրան դիմած հայ զանգուածները իրենց հայեացքը յառել են դէպի հարեւան քրիստոնեայ երկրները (Բիւզանդիա, Սլաւոնական աշխարհ, Վրաստան)՝ որպէս քիչ թէ շատ ապահով հանգրուանի:

Հայկական արտագաղթերի եւ գաղութների առաջացման իսկական պատմութիւնը սկսւում է, իրօք, քրիստոնէութեան ընդունումից յետոյ: Մի որեւէ երկրում հայ գաղութի հիմնադրման, ամփոփման եւ գոյատեւման նախապայմանը գաղափարաբանական ընդհանրութիւնն է. առանց նրա ցեմենտող ուժի ոչ մի ազգային ընդհանրութիւն երկար գոյատեւել չի կարող: Գաղթահայ համայնքների համար այդ ուժը հանդիսանում էր քրիստոնէական ուսմունքը եւ եկեղեցին՝ որպէս այդ ուսմունքը ջատագովող եւ պահպանող հաստատութիւն: Ահա թէ ինչու մինչեւ քրիստոնէութեան ընդունումը Հայաստանից հեռացած բազմահազարանոց եւ ոչ մի գաղթականական հոսանք չստեղծեց Հայկական գաղութ եւ կուլ գնաց օտար միջավայրին (տուեալ դէպքում պարսից միջավայրին):

Մեր ասածի ապացոյցն այն է, որ միջնադարեան եւ նոր շրջանի բոլոր քիչ թէ շատ աչքի ընկնող հայ գաղութները ունէին իրենց եկեղեցին՝ նրա բոլոր հաստատութիւններով, որոնք ազգապահպանման խնդրին համեմատ, ազգային շունչ ու ոգի էին հաղորդում տուեալ գաղութին, իրականացնում նրա մշտատեւ կապը հայրենիքի հետ:

Հայկական արտագաղթերը խթանող հիմնական պատճառների մէջ առաջին հերթին պէտք է առանձնացնել օտար նուաճողների դէպի Հայաստան պարբերաբար կատարած արշաւանքները (որոնք իրենց հերթին պայմանաւորուած էին Արեւելքի ու Արեւմուտքի միջեւ Հայաստանի զբաղեցրած բուֆերային աշխարհագրական դիրքով), ազգային պետականութեան կորուստը, երկրում օտարերկրեայ անտանելի տիրապետութեան հաստատումը, ֆէոդալական երկպառակութիւնները, արտաքին աշխարհի հետ ունեցած առեւտրատնտեսական սերտ կապերի առկայութիւնը, սոցիալական եւ դաւանաբանական պայքարը, ինչ որ չափով նաեւ՝ տարերային աղէտները:

Նշուած պատճառներից իւրաքանչիւրն իր կապակցութիւնների մէջ բազմերանգ է եւ լայն քննարկման խնդիր, մանաւանդ, որ այդ պատճառները միշտ չէ եւ յաճախ չէ, որ դրսեւորուել են միատեսակ:

Հայկական արտագաղթերը նկատելիօրէն մեծ չափեր ընդունեցին արդէն արաբական արշաւանքների եւ մանաւանդ երկրում արաբների տիրապետութեան հաստատման շրջանում: Բիւզանդական շրջաններում, Բալկաններում, Հիւսիսային Կովկասում, Մերձաւոր Արեւելքում եւ այլուր 7-11-րդ դարերում հայ բնակչութեան յայտնուելը եւ հայկական գաղթավայրերի առաջացումը առաջին հերթին միահիւսուած էին այդ դարերում Հայաստանում տեղի ունեցած ռազմաքաղաքական անցքերի՝ արաբների, բիւզանդացիների եւ սելջուկների այստեղ ձեռնարկած արշաւանքների ու վարած քաղաքականութեան հետ:

Բիւզանդիայի եւ Արաբական խալիֆաթի միջեւ գրեթէ 300 տարի (7-11-րդ դարեր) Հայաստանի, Փոքր Ասիայի եւ Կիլիկիայի համար մղուած պատերազմները եւ ապա Թուրք-սելջուկների արշաւանքները անլուր կոտորածների եւ անկարագրելի զրկանքների հետ միաժամանակ հայ ժողովուրդին բերեցին իր յետագայ հետեւանքներով թերեւս աւելի ծանր արհաւիրք՝ զանգուածային արտագաղթերը, որոնք դրսեւորւում էին բռնի կամ կամովին ձեւերով: Սակայն կամովին բառը այստեղ զուտ պայմանական իմաստով է գործածական, քանի որ կամաւոր գաղթող հայութիւնն էլ այդ քայլին դիմում էր ակամայից՝ օտար բռնակալի ճնշումից ու վայրագութիւններից հարկադրուած:

Արաբական տիրապետութիւնը Հայաստանում երկրի բնակչութեան համար նշանակում էր տնտեսական ու մշակութային կեանքի փլուզում, դառը զրկանքներ, մարդկային անհամար զոհեր: Հայաստանի ամբողջ ունեցուածքը յայտարարուել էր խալիֆաթի սեփականութիւն: Հարկադրուել էր ողջ բնակչութիւնը, հարկադրուել էին անգամ մեռելները: «Եւ տիրէ ընդ նորա Աբդլայ (սա Աբասեան դինաստիայի վերջին խալիֆն էր - Վ.Մ.), եւ առաքէ զեղբայր իւր զմիւս Աբդլայ շրջել ընդ ամենայն աշխարհս իշխանութեան իւրոյ: Որ նախ ելեալ յաշխարհս Հայոց՝ բազում վշտօք եւ նեղութեամբք վտանգէր զամենեսին եւ հասուցանէր ի չքաւորութիւն տնանկութեան, մինչեւ պահանջել հարկս եւ ի մեռելոցն: Եւ զամենայն բազմութիւն որբոց եւ այրեաց չարալլուկ տառապեցուցանէր. վտանգէր զքահանայս եւ զպաշտօնեայս աստուածային խորանին խոշտանգանօք եւ քքօք այպանութեան եւ գանիւք՝ ի յայտ ածել զանուանս վախճանելոցն եւ զընտանիս նոցուն: Խոշտանգէր եւ զբնակիչս աշխարհիս բռնագոյն եւ դառն հարկապահանջութեամբ, առնուլ ըստ գլխոյ բազում զուզէս արծաթոյ, եւ դնել կնիք կապարեայ յամենեցուն պարանոցս»:[1]

Անգամ մեռեռների դիմաց հարկ պահանջող տիրակալներից փրկուելու համար բնակչութիւնը ստիպուած հեռանում էր երկրից՝ ֆիզիքապէս գլխովին վերանալու վտանգին դէմ-յանդիման, մանաւանդ որ արաբական տիրապետու-

1. «Ղեւոնդեայ վարդապետի պատմութիւն», Ս. Պետերբուրգ, 1887, էջ 127:

թեան դէմ ուղղուած նրա պայքարը ըստ մեծի մասին անյաջող աւարտ էր ունենում՝ թշնամու զինական ուժի գերակշիռ լինելու եւ հայ նախարարների անմիաբանութեան հետեւանքով:

Գաղթականական առաջին հոսանքները 7-11-րդ դարերում քայլ առ քայլ անցնում էին բիւզանդական շրջաններ, մասամբ նաեւ Վրաստան եւ Աղուանք: Սակայն, որպէս կանոն, աւելի հոծ գաղթականութիւն տեղափոխուեց Բիւզանդիայի փոքրասիական եւ անգամ եւրոպական շրջաններ, քանի որ Վրաստան եւ Աղուանք գնալը այնքան էլ նպատակայարմար չէր, որովհետեւ վրացիներն ու աղուանական ցեղերը որպէս արաբական «Արմենիա» փոխարքայութեան մէջ մտնող ժողովուրդներ, նոյնպէս ենթակայ էին արաբական ճնշմանը: Ամէնից յարմարը մնում էր Բուզանդիան եւ յետագայում նրա վրայով նաեւ՝ Բալկաններ ու սլաւոնական երկրներ: Սկիզբ առնելով 7-րդ դարից, հայերի տեղաշարժերը դէպի բիւզանդական շրջաններ այնուհետեւ դար առ դար ոչ միայն չեն նուազում, այլեւ ուժգնանում են, իսկ 10-11-րդ դարերին արդէն ընդունում են աննախընթաց մեծ ծաւալ:

Արաբական արշաւանքների արդէն իսկ սկզբնական շրջանում հայ գաղթականները սկսում են անցնել Բիւզանդիայի կայսրութեանը ենթակայ փոքրասիական շրջաններ եւ անգամ Կ. Պոլիս: Որպէս կանոն այս շրջանում նրանք այստեղ տակաւին չէին կարող յարատեւել եւ ընդունելով ուղղափառութիւն՝ դաւանում էին «հայ-հոռոմ» ու ձուլւում: Եւ այնուամենայնիւ, նոյնիսկ 6-7-րդ դարերում ոչ քիչ թուով հայեր զերծ էին մնացել ձուլումից: 6-րդ դարի կէսերից Կ. Պոլսում կար ամփոփ մի հայ գաղութ: Հաւանաբար, սրանք այն հայերից էին, որոնց Յուստինեանոս կայսրը 6-րդ դարում Մելիտինէից բերել էր Կ. Պոլիս եւ մասամբ էլ տեղափոխել Թրակիա:[2] Սեբէոսի հաղորդմամբ, Մորիկ կայսրը նոյն դարում Թրակիական շրջաններ է բերում հոծ թիւով հայ գաղթականներ եւ նրանցից կազմուած գնդերով պատերազմում աւարների դէմ: «Հրաման ետ դարձեալ ժողովել զամենայն այր եւ ձի ի Հայաստանեայց եւ զիշխանս նախարարացն, որք հմուտ էին եւ կարող զդէմ ունել՝ կռուել ռազմ ի Նիզակամուխ ճակատի: Եւ հրաման ետ դարձեալ վերստին զաւր հանել յաշխարհէն Հայոց բազում յոյժ, զամենեսեան կամով եւ ընտրով հասակի. կազմել գունդս զարդու եւ զինու վառեալ եւ անցուցանել զամենեսեան յաշխարհն Թրակացւոց ընդդէմ թշնամոյն»[3]:

6-րդ դարում Մորիկ կայսրը հակահայկական գործարքի մէջ է մտնում իր հակառակորդ պարսից շահի հետ՝ Հայաստանը հայերից դատարկելու նենգ առաջարկութեամբ: «Յայնմ ժամանակի թագաւորն Յունաց Մաւրիկ հրամայէ գրել առ թագաւորն Պարսից գիր ամբաստանութեան վասն իշխանացն ամենայն Հայաստանեայց եւ զաւրաց իւրեանց: «Ազգի մի խոտոր եւ անհնազանդ են, ասէ, կան ի միջի մերում եւ պղտորեն: Բայց ե՛կ, ասէ, ես զիմս ժողովեմ եւ ի

2. «Փորձ», Թիֆլիս, 1877-1878 թթ., գիրք 4-րդ, էջ 167:
3. «Պատմութիւն Սեբէոսի», աշխատասիրութեամբ Գ. Վ. Արգարեանի, Երեւան, 1979, էջ 90:

Թրակէ գումարեմ. եւ դու զքոյդ ժողովէ եւ հրամայէ յԱրեւելս տանել: Զի եթէ մեռանին՝ թշամիք մեռանին. եւ եթէ սպանանեն՝ թշնամիս սպանանեն. եւ մեք կեցցուք խաղաղութեամբ: Զի եթէ դոքա յերկրի իւրեանց լինիցին՝ մեզ հանգչել ոչ լինի:

Միաբանեցան երկոքին: Եւ սկսաւ կայսրն հրաման տալ, զի ժողովեսցեն զամենեսեան եւ ի Թրակէ գումարեսցեն. եւ սաստիկ տագնապէր՝ հրաման կատարեր»: Սակայն հայերի մի մասը փախչում է Բիւզանդիայից եւ գալիս «ի ծառայութիւն Պարսից, մանաւանդ որոց երկիրն ընդ նորա իշխանութեամբ էր»:[4] Եւ չնայած դրան, ինչպէս վերը տեսանք, Մորիկին այնուամենայնիւ յաջողւում է մեծ թուով հայերի բերել Թրակիա, որտեղ մասամբ իրականանում է նրա իղձը, որովհետեւ ի վերջոյ հայոց մի մասը հեռաւոր Դանուբի ափերին կնքում է իր մահկանացուն. «եւ բազմութիւն նախարարացն եւ զաւրացն Հայաստանեայց յաւուր յայնմիկ կործանեալ սատակեցան»:[5]

Եթէ մինչեւ 7-րդ դարը Բիւզանդիա անցած հայերը հիմնականում ձուլւում էին, ապա դրանից յետոյ պատկերը նկատելիօրէն փոխւում է: Խնդիրն այն է, որ մինչեւ 7-րդ դարը Բիւզանդիա անցած հայերը համեմատաբար մեծ թիւ չեն կազմել եւ դժուարութեամբ են դիմակայել ձուլումի միջավայրին: Այնինչ 7-րդ դարի վերջերից, երբ արաբական հալածանքները Բիւզանդիա են քշում հայ ժողովուրդի աւելի մեծամեծ զանգուածներ, որոնք սկսում են զբաղեցնել ամբողջական շրջաններ եւ բնակավայրեր կայսրութեան մանաւանդ փոքրասիրական տարածքներում եւ գոյատեւել որպէս ինքնուրոյն հայ համայնքներ, գաղթական հայութիւնը շատ տեղերում կարողանում է պահպանել իր ազգային ինքնութիւնը: Դրան նպաստում է այն, որ սրանց կապերը հայրենիքի հետ աւելի կենդանի էին եւ շարունակական՝ մի կողմից հայկական շրջաններում բիւզանդական բանակաթեմերում հայ զինուորների նշանակալից թիւ կազմելու, իսկ միւս կողմից՝ դէպի Բիւզանդիա եկող հայ բնակչութեան նորանոր խմբերի հետեւանքով:

8-րդ դարի հենց սկզբներին հայ նախարարների մի մասը, նշանակալից չափով հպատակ ժողովուրդով, գաղթեց Բիւզանդիա: Դա տեղի ունեցաւ 706 թուականի յայտնի անցքերից յետոյ, երբ Դրշապետ գիւղի մօտ (Նախճաւանի Վանանդ գաւառ) հայ եւ բիւզանդական միացեալ ուժերը պարտուեցին արաբներից, եւ վերջինները բազում հայ նախարարների ու ազատների այրեցին Նախճաւանի եւ Խրամ աւանի եկեղեցիներում:

Արաբական տիրապետութեան սաստկացմանը համաքայլ աճում էր Բիւզանդիա քաշուող հայութեան թիւը՝ մանաւանդ, որ մինչեւ 10-րդ դարը բիւզանդական վարչակազմի վերաբերմունքը հայերի նկատմամբ դեռեւս հանդուրժողական էր եւ տանելի: 8-րդ դարի 50-60-ական թուականներին Կոստանդին Կոպրոնիմոս կայսեր թոյլտուութեամբ, որը զօրքով մտել էր Կարնօ նահանգ, հազարաւոր հայեր հատուածաբար տեղափոխւում են բիւզանդական շրջաններ:

4. Նոյն տեղը, էջ 86-87:
5. Նոյն տեղը, էջ 91:

«Եւ նորա (Կոստանդին Կոպրոնիմոս կայսրը– Վ.Մ.) տուեալ հրաման, վաղվաղակի հանդերձեալ զաղխս իւրեաց՝ խաղացին յառաջ, ապաւինեալք ի զօրութիւն տէրունեան խաչին եւ ի փառս արքային. թողին զերկիր ծննդեան իւրեանց, եւ հատուածեալք անկան ի կողմն արքային...»:[6]

Մի երկու տասնամեակ անց արտագաղթը դէպի Բիւզանդիա աւելի ծաւալուն է դառնում, որն արդէն կապուած էր արաբների դէմ 774–775 թթ. բարձրացած ապստամբութեան պարտութեան հետ: Այս արտագաղթը փաստօրէն գլխաւորում էին Մամիկոնեան, մասամբ էլ Բագրատունիների ընտանիքները: Լքելով իրենց շատ կալուածքներ, նրանք, նկատելի թուով հպատակ ժողովուրդով հանդերձ, անցնում էին Բիւզանդիա, մասամբ էլ՝ ամուր լեռնային շրջաններ: 790 թուականին նոյն քայլին են դիմում 12 հազար հայեր Շապուհ Ամատունու գլխաւորութեամբ:[7] Առհասարակ 775 թ. ապստամբութեան պարտութիւնը առաջ բերեց հայ նախարարական տների քայքայում. նախարարների մի մասը գերադասեց տեղափոխուել բիւզանդական շրջաններ, իսկ մի մասն էլ հարկադրուած բռնեց արաբներին համակերպուող ուղի: Երկու երեւոյթն էլ խթանում էին հայերի արտահոսքը:

Նշուած ապստամբութեան պարագլուխներից մէկը՝ Արտաւազդ Մամիկոնեանը, շուտով դառնում է Անատոլիկոն թեմի ստրատեգ եւ կառավարիչ: Առհասարակ բիւզանդական վարչակարգի քաջալերիչ վերաբերմունքը հայ աւագանու նկատմամբ պակաս դեր չխաղաց հայերին արտագաղթի մղելու գործում: Աւելի ուշ, 18–րդ դարում, նոյն երեւոյթը մենք տեսնում ենք այս անգամ արդէն հայերի՝ դէպի ռուսական շրջաններ տեղաշարժուելու շարժառիթներում: Բիւզանդիայի այդ քաջալերիչ վերաբերմունքի եւ իրենց ձիրքի վրայ յենուելով՝ հայ աւագանու (եւ ոչ միայն նրա) շատ ներկայացուցիչների յաջողւում է կայսրութեան մէջ հասնել քաղաքացիական եւ զինուորական բարձր պաշտօնների: «Բիւզանդիան,– գրում է նշանաւոր բիւզանդագէտ Շառլ Դիլը,– իր լաւագոյն զօրահրամանատարներից, գերազանց վարչապետներից շատերին ստացել էր Հայաստանից: Հայաստանից էին սերում նոյնիսկ որոշ կայսրեր՝ Հերակլը՝ 8–րդ դարում, Լեւոն Հայկը՝ 9–րդ դարում, Ռոման Լեկապինը եւ Յովհաննէս Զմշկիկը՝ 10–րդ դարում: Բիւզանդիան Հայաստանին պարտական էր իր հիանալի զինուորների համար, քանի որ հայկական զօրաջոկատները 10–րդ դարում համարւում էին բիւզանդական բանակի լաւագոյն ստորաբաժանումները: Այդ պատճառով էլ հեշտ է հասկանալ, թէ ինչու կայսերական կառավարութիւնը երազում էր այդ բնակչութիւնը վերածել իր հպատակների, բնակչութիւն, որն ամբողջութեամբ ներծծուած էր բիւզանդական ազդեցութեամբ: Կայսերական դիւանագիտութիւնն այդ նպատակով դիմում էր ամենաբազմազան միջոցների»:[8]

8–րդ դարում Բիւզանդիայի լաւագոյն զօրահրամանատարներից էին

6. Ղեւոնդ, էջ 129:
7. Նոյն տեղը, էջ 169:
8. Ш. Диль, Основные проблемы византийской империи, м., 1947, с. 140-141.

Տաճատ Անձեւացին, Վարազտիրոցը, Գրիգորիսը, որոնց հրամանատարութեան ներքոյ 778 թ. բիւզանդական բանակները փայլուն յաղթանակ տարան արաբների դէմ, Գերմանիկէի մօտ: Հենց այս յաղթանակից յետոյ էր, որ մեծ թուով հայերի Մարաշից տեղափոխեցին Թրակիա: Հաւանաբար, սրանք պաւլիկեաններ էին, որովհետեւ Գերմանիկէն նրանց կենտրոնն էր: Բալկաններ անցած պաւլիկեանները սկսեցին այստեղ եւս տարածել իրենց ուսմունքը: 765 թ. Թրակիայում կար հայկական մի զօրամաս, որը կազմուած էր Կոստանդին 5–րդի կողմից 755 թ. Կարինից եւ Մելիտինէից տեղափոխած հայերից: Բիւզանդական ժամանակագիր Թէոփանէսի հաղորդմամբ՝ սրանք էին, որ սկսեցին տարածել պաւլիկեան աղանդը:[9]

8–11–րդ դարերում Բիւզանդիայից հայ գաղթական խմբերը անցնում են Բուլղարիա եւ Մերձդանուբեան տարածքներ: Կրում (803–814) եւ Օմուրթաք (814–831) խաների նախապուլկարական շրջանի մի արձանագրութեան վկայութեամբ, նրանց մօտ Բիւզանդիայից Բուլղարիա էին եկել հայ զինուորականներ Վարդանը, Գեարջոյլը եւ Տրդատը:[10]

Այս շրջանում Բիւզանդիայից Բուլղարիա անցած հայերի մէջ աւելի ստուար թիւ էին կազմում մանաւանդ արհեստաւորները: Նոյն խաների օրօք բուլղարական մայրաքաղաքներ Պլիսկայի եւ Պրեսլաւայի պալատների ճարտարապետութիւնը նմանութեան շատ գծեր ունէր Դուինի, Արուչի եւ հայկական այլ վայրերի, քան Կոնստանդնուպոլսի պալատների հետ: «Բուլղարների անմիջական շփումները հայերի եւ սիրիացիների հետ,– նշում է Ա. Ցակոբսոնը,–կարող էր տեղի ունենալ (եւ, անկասկած, տեղի է ունեցել) հենց բուլղարական մայրաքաղաք Պլիսկայում կատարուող բուռն շինարարական շրջանում: Այդ շինարարութեան մէջ հայ եւ սիրիացի ճարտարապետների մասնակցութիւնն աւելի քան հաւանական է:[11] Վասիլ 1–ին կայսեր օրօք, մանաւանդ, Թրակիայում հայերի թիւը մեծ չափերի է հասնում, եւ, հայազգի Սուրբ Մարիամ նախավկայի վարքի համաձայն, նրանց մի մասն արդէն դարձել էր «հայ–հոռոմ», այսինքն քաղքեդոնիկ:[12]

9–րդ դարում, Բագրատունեաց Հայաստանը ռազմական հզօր ուժ ունէր, եւ առաջաւոր Ասիայում այդ ուժը Բիւզանդիայի համար լուրջ յենարան էր:[13] Հաւանաբար դա էր գլխաւոր շարժառիթը, որը Բիւզանդիային մղել էր ակտիւօրէն նպաստելու հայկական թագաւորութեան վերականգնմանն ուղղուած գործընթացներին: Սակայն որքանով թուլանում էին արաբների դիրքերը, այնքանով Բիւզանդիայի նուաճողական նկրտումները աւելի սակաւ էին ուղեկցւում սիրաշահող դիւանագիտութեամբ: Ընդհակառակը, տասնամեակ առ տասնամեակ սաստկանում էր Հայաստանի նկատմամբ

9. ՀՍՍՀ ԳԱ «Տեղեկագիր», հաս. գիտ., 1960, թիւ 7–8:
10. (ՀՍՍՀ ԳԱ «Լրաբեր» 1981, թիւ 4, էջ 65–77):
11. «Византийский временник», Т. 28, 1968, с. 206:
12. «Պատմա-բանասիրական հանդէս», 1980, թիւ 3, էջ 244–250:
13. H. Gelzer, Abriss der byzantinischen Kaisergeschichte (K. Krumbecker, Geschichte der byzantinischen Literature, Munchen, 1897, S. 979, 981, 1010).

վարուող քաղաքականութիւնը: Կայսրներ Յովհաննէս Զմշկիկը (969-976) եւ Վասիլ Բ.-ը (976-1025) հայկական շրջանների օպուկացումը ուղեկցում էին բնակչութեան տեղահանմամբ: Օգտագործելով հայ նախարարական տների երկպառակութիւններն ու կենտրոնախոյս ձգտումները, նրանք հեշտութեամբ իրականացնում էին հայ բնակչութեան տեղահանումը եւ նրա տեղափոխումը կայսրութեան արեւմտեան շրջաններ: Հայաստանը դատարկելու եւ զինական ուժից զրկելու բիւզանդական քաղաքականութիւնը ի վերջոյ նպաստեց սելջուկների առաջխաղացմանը՝ դառնալով թէ հայկական եւ թէ բիւզանդական պետականութեան հիմքերի խարխլման պատճառներից մէկը: Որո՞նք էին Հայաստանի նկատմամբ բիւզանդական կայսրութեան վարած այսօրինակ քաղաքականութեան միտումները.

ա) Հայերին դաւանափոխելու եւ յոյների մէջ ձուլելու ձգտումը.

բ) Կայսրութեան շատ շրջանների եւ մանաւանդ եւրոպական մասի բնակեցման ու տնտեսական զարգացման անհրաժեշտութիւնը.

գ) Հայերի զինուորական ուժը Արեւմուտքում կայսրութեան թշնամիների դէմ ուղղելը, մանաւանդ որ Արեւելքում արաբներն այլեւս նախկին վտանգը չէին ներկայացնում.

դ) Հայ ազնուական դասի չէզոքացումը եւ ի վերջոյ վերացումը՝ հակաբիւզանդական որեւէ պայքար ղեկավարելու հնարաւորութիւնից նրան զրկելու համար:

Տակաւին 964-968 թթ. դէպի Արեւելք ձեռնարկած արշաւանքի ժամանակ Նիկեփորոս Բ.-ը, օգտուելով Տարօնի իշխան Աշոտ Պատրիկի մահից, Տարօնը միացրեց կայսրութեանը, իսկ նրա յաջորդ Յովհաննէս Զմշկիկ մեծ թուով հայեր, հիմնականում Թոնդրակեցիներ, գաղթեցրեց Փիլիպպոլ, նպատակ հետապնդելով թուլացնել գնալով հակաբիւզանդական ազգային ազատագրական պայքարի ընթացք ձեռք բերող այդ շարժումը եւ նրա մասնակիցներին օգտագործել բուլղարներից, ռուսներից եւ հունգարացիներից պաշտպանուելու համար: Գրիգոր Մագիստրոսի հաղորդման համաձայն, Թոնդրակեցիները գործում էին կայսրութեան ողջ տարածքում, իսկ ըստ բիւզանդական որոշ աղբիւրների՝ հանդէս էին գալիս Փունդագեցիների (Թափառական ժողովուրդի) անուան տակ:[14] Սակայն հայազգի Զմշկիկը, ելնելով արտաքին թշնամու դէմ մղուող պայքարում հայերին օգտագործելու խնդրից, «մոայլ մոլեռանդութեամբ չէր վերաբերւում դէպի հայ համայնքները, ինչպէս խստապահանջ օրթոդոքսները»:[15] Նա գաղթեցուած հայերին օգտագործում է նաեւ մայրաքաղաք Կ. Պոլսի պաշտպանութեան համար:

Հայերին տեղահանելու գործում ամէնից շատ ակտիւութիւն ցուցաբերեց Վասիլ Բ.-ը: 1001 եւ 1021-1022 թթ. դէպի հայկական մարզեր ձեռնարկած իր արշաւանքների ժամանակ Վասիլ Բ.-ը շատ հայերի տեղահանեց հայրենի

14. Р. Бартикян, Движение Тондракидов в Византии («Вестник» АН. РА, 1980, No. 9, с. 69):

15. Հ. Գելցեր, Համառոտութիւն բիւզանդական կայսրների պատմութեան, Վաղարշապատ, 1901, էջ 334:

օջախներից եւ վերաբնակեցրեց Մակեդոնիայում: «Այլ յորժամ էր ի Պաղտատ Թագաւորն Վարդ եւ խաղաղանայր Թագաւորութիւն Վասլին՝ կամեցաւ յազգէն Հայոց, որ ընդ իւրով Թագաւորութեամբն՝ անցուցանել ի Մակեդոնիա ընդդէմ Բուլղարացն, զի չինեսցեն զերկիրն: Որ եւ տարեալ բնակեցոյց զյոլովս յաշխարհն յայն»:[16]

Վասիլ Բ.-ի ահաբեկմամբ Բագրատունիների Յովհաննէս Սմբատ Թագաւորն իր Թագաւորութիւնը կտակեց կայսրութեանը, որը այնքան ճակատագրական եղաւ Հայաստանի համար, մեծապէս նպաստելով նաեւ արտաքսման ուժեղացմանը: Վասիլ Բ.-ի ժամանակ Վասպուրականի Սենեքերիմ Թագաւորը հարկադրուած Բիւզանդիային Թողեց իր աշխարհը՝ 72-բերդ, 4000 գիւղ եւ 8 քաղաք եւ փոխարէնը ստանալով Սեբաստիան՝ իրեն ենթակայ բնակչութեամբ տեղափոխուեց այնտեղ:[17] 1041 թուականին, Բագրատունեաց Թագաւորութեան վերացման նախօրէին, մի շարք բիւզանդամէտ հայ իշխաններ լքում են հայրենի տիրոյթները եւ անցնում Բիւզանդիա եւ «եղեն չինանիստ աւանք՝ բնակութիւն գազանաց, եւ անդաստանք նոցա՝ յարօտ երէոց»:[18] Սրանք այն իշխաններն էին, որոնք Բագրատունիների Թագաւորութեան Թուլացմանը ի տես՝ աճապարում էին ապահով ու յարմար վիճակ ձեռք բերել Բիւզանդիայում: Նրանց այդ քայլը Բագրատունիների Թագաւորութեան վերացման նախօրեակին էր, 1045 թ., եւ Գագիկ Բ.-ին նենգաբար Կոստանդնուպոլիս հրաւիրելը եղաւ այդ Թագաւորութեան վերջն�ը:

Արեւելքում արաբների Թուլացմանը համաքայլ իրենց յաջողութիւններից արբած՝ բիւզանդական իշխանութիւնները կարծես թէ չէին ուզում նկատել այն, որ քայքայելով հայկական եւ վրացական դիմադրողական ուժը, ողբերգական վիճակ են ստեղծում նաեւ բուն կայսրութեան համար: Հիմնական վտանգը տեսնելով կայսրութեան արեւմտեան սահմաններում, Բիւզանդիան փաստօրէն Արեւելքում դարպասները բաց էր Թողել ներխուժող վաչկատուն յորդաների առաջ:

Բագրատունեաց Թագաւորութեան վերացմանը շուտով յաջորդեց Թուրքսելջուկների ներխուժումը Անդրկովկաս եւ փոքր Ասիա: Սրանց Հայաստանն այլեւս ի վիճակի չէր լրջօրէն դիմադրել, քանի որ կորցրել էր պետականութիւնը, իսկ նրա մարտունակ ուժերը երկրից հեռու մարտնչում էին բիւզանդական սահմանների պաշտպանութեան կամ ընդլայնման համար: 1045 թուականի համար Ա. Լաստիվերտցին նկատում է, որ երկիրը մարդաթափ է դարձել, իսկ հայկական զօրքերը Թափառում են Վրաստանում, Պարսկաստանում եւ Բիւզանդիայում. «Հեծելազօրն անտէրունչ շրջեալ ոմն ի Պարսս, ոմն ի Յոյնս, ոմն ի Վիրս,- բողոքում է պատմիչը:- Սեպուհ գունդն ազատաց ելեալ ի հայրենեաց,

16. «Ստեփանոսի Տարօնեցւոյ Ասողկան Պատմութիւն տիեզերական», Ս. Պետերբուրգ, 1885, էջ 201:

17. «Սամուէլի Քահանայի Անեցւոյ հաւաքմունք ի գրոց պատմագրաց», Վաղարշապատ, 1893, էջ 104:

18. «Պատմութիւն Արիստակիսի Լաստիվերտցւոյ», Երեւան, 1963, էջ 55:

անկեալ ի ճոխութենէ, մոնչէն ուր եւ են իբրեւ զկորիւնս առիւծոց ի խշտիս իւրեանց։ Արքունական ապարանքն աւերակ եւ անմարդի։ Մարդաբնակ աշխարհն թափուր ի բնակչուց»։[19] Հայերին տեղահանելու եւ Հայաստանը պաշտպանական ուժից զրկելու հարցում բիւզանդացիներին տուած իր գնահատականում աւելի խիստ է Մ. Ուռհայեցին։ «Սակայն Հոռոմք,– գրում է նա,– յայն ջանս ջանացան, որ լուր (զուր) զպարիսպ ամրութեան տանս Հայոց քակեալ կործանեցին... եւ զՊարսիկք (սելջուկ Թուրքերը– Վ.Մ.) անտէր տեսին զամենայն արեւելք. եւ յայնժամ մեծաւ զօրութեամբ զօրացան այլազգիքն, որ ի մէկ տարւոյ հասն մինչ ի դուռն Կոստանդնուպոլսի եւ առին զամենայն աշխարհն Հոռոմոց»։[20]

Սելջուկները առաջին անգամ Հայաստան մտան 1048 թ.։ Վասպուրականի վրայով տեղեկանալով Բասէն՝ նրանք քարուքանդ արեցին 24 գաւառ եւ ապա մեծ աւարով ու գերիներով ետ դարձան Պարսկաստան։[21] Երկրորդ արշաւանքի ժամանակ (1048–1049 թթ.) սելջուկների աւերածութիւնները տարածուեցին մինչեւ Թագատեաց գաւառ՝ արեւմուտքում, մինչեւ Սպեր եւ Տայք՝ հիւսիսում, մինչեւ Տարօն եւ Հաշտենից գաւառ եւ Խորձայնի անտառ՝ հարաւում։ Այս երկրորդ արշաւանքի ժամանակ մոխրակոյտերի է վերածւում Արծնը՝ կորցնելով 150·000 մարդ։[22]

1054 թ. Հայաստան է ներխուժում Տուղրիլը՝ «գազանն մահաշունչ արիւնարբու եւ մարդախոշոշն» (Լաստիվերտցի)։ Կողոպտելով երկրի հիւսիսային եւ կենտրոնական շրջանները, Տուղրիլի զօրքերը մեծաթիւ գերիներով եւ աւարով ետ քաշուեցին։ Ամենաճակատագրականը, թերեւս առաւել տհմկեցուցիչը, Ալփ-Արսլանի արշաւանքն էր 1064 թուականին։ Սելջուկները գրաւեցին Անին եւ հիմնայատակ աւերեցին այն։ «Անդ էր տեսանել զմիշտս եւ զտանգնապս իւրաքանչիւր հասակի,– ասում է Ա. Լաստիվերտցին.– զի՛ի գրկաց մարդն յափշտակեալ լինէին մանկունք անողորմաբար գբարի հարեալ, եւ մարքն արեամբ եւ արտասուօք զմանկունս իւրեանց թանային. զհայր եւ զորդի մի տուր խողխողէր... զի լցաւ քաղաքն լի ծայրիւ եւ ծայրիւ, եւ ճանապարհ էր մարմին սպանելոցն. զի ի բազմութենէ կոտորելոցն եւ յանթուելի դիականացն՝ վտակն մեծ, որ անցանէ առ քաղաքաւն, ներկանէր արեամբ. եւ զազանք վայրի եւ ընտանի՝ եղեն գերեզման դիականացն, վասն զի ոչ գոյր որ թաղէր եւ հարկաւոր հողոմն ծածկէր զխողխողեալսն»։[23]

Սելջուկեան արշաւանքների հետեւանքով առաջացած ծանր դրութեան հետեւանքով հայերի՝ դէպի Բիւզանդիա կատարուող աւանդական գաղթ նոր չափերի է հասնում։ Ս. Անեցու վկայութեամբ, 1064 թ. Անիի եւ շրջակայքի

19· Լաստիվերտցի, էջ 60։
20· Մատթէոս Ուռհայեցի, Ժամանակագրութիւն, Վաղարշապատ, 1898, էջ 135–136։
21· Լաստիվերտցի, էջ 65։
22· Ուռհայեցի, էջ 102–103։
23· Ա. Լաստիվերտցի, էջ 186։

կենդանի մնացած բնակիչները կամովին փախչում են դէպի Բիւզանդիա։[24] 1064 թ. Վասպուրականի Սենեքերիմ թագաւորի օրինակին է դիմում Կարսի Գագիկ թագաւորը, որը բիւզանդական կայսր Դուկասին զիջելով իր թագաւորութիւնը, փոխարէնը ստանում է Ծմանդաւը (Կիլիկեան Տաւրոսում)՝, Լարխան, Ամասիան, Կոմանը եւ հարիւր գիւղ եւ իր ժողովուրդով հանդերձ տեղափոխւում է այնտեղ։[25]

9–11-րդ դարերում Հայաստանից հեռացած բնակչութեան մի հատուածը աստիճանաբար անցաւ Կիլիկիա եւ այնտեղ հաստատուած իր ազգակիցների հետ հիմք դրեց հայկական պետականութեանը։ Գաղթական հայութեան ստուարաթիւ հոսանքներ շարժուեցին Կ. Պոլիս, Բալկաններ, Մերձդանուբեան տարածքներ, Պոնտոսի եւ Կովկասի վրայով՝ Ղրիմ, ինչպէս նաեւ Պարսկաստան, Միջին Ասիա եւ անգամ Չինաստան։ Նկատելի թիւ էին կազմում նաեւ այն հայերը, որոնց արաբները աստիճանաբար քշել էին Եգիպտոս, Պաղեստին եւ Ասորիք։ Սրանց մի մասն էլ, 11-րդ դարից սկսած, կամովին, տնտեսական կապերի աղերսով, գաղթել էր Վերին Եգիպտոս։ Նշուած շրջաններում 11-րդ դարում հայերի թիւն այնքան էր մեծացել, որ Գրիգոր Բ. Վկայասէր Կաթողիկոսը անհրաժեշտ համարեց Պաղեստինի, Ասորիքի եւ Եգիպտոսի հայերի համար առանձին եպիսկոպոսութիւններ հիմնել։[26]

Սակայն բիւզանդական կղերը կայսրութեան տարածքներն անցած հայերի նկատմամբ եւս շարունակում էր հետապնդման քաղաքականութիւնը։ Թէ կղերը եւ թէ պետական վարչակազմը կառչած էին մնացել հակահայկական իրենց նախկին քաղաքականութեանը նոյնիսկ առաջացած խստիւս անբարենպաստ քաղաքական պայմաններում, երբ սելջուկները սկսել էին շարժուել կայսրութեան փոքրասիական տարածքների խորքերը։ Այդ քաղաքականութեան կորստաբեր հետեւանքները նաեւ հենց բուն կայսրութեան համար իրենց երկար սպասել չտուեցին եւ նպաստեցին սելջուկների առաջխաղացմանը։ Ցեղուելով բիւզանդական իսկ աղբիւրների վրայ, Հ. Գելցերը այս աղերսով նկատում է.– «Եօթերորդ եւ յետագայ դարերի բոլոր տխուր հետեւանքները ոչ մի ազդեցութիւն չունեցան յոյն հոգեւորականութեան վրայ, որը ոչինչ չէր սովորել եւ ոչինչ չէր մոռացել։ Բնորոշ է, որ տակաւին չարաբաստիկ Ռոման Դիոգենեսը (1067–1071 (Արեւելք) կատարուելիք իր արշաւանքի նախօրեակին երդում տուեց վերադառնալուց յետոյ ոչնչացնել ամբողջ հայկական հաւատը, եւ այդ պատճառով էլ բոլոր հայ վարդապետները աղերսագին աղօթում էին Աստծուն, որպէսզի կայսրը գլխովին ջախջախուի, ինչպէս անհաւատ Ցուլիոսը, որին անիծել էր սուրբ Վասիլիոսը։ Հայոց այդ յուսահատ վիճակը, որը գրգռուել էր յունական անմիտ կրօնական կառավարչութեան կողմից, մեզ հնարաւորութիւն է տալիս հասկանալու սելջուկների յաջողութիւնների պատճառները»։[27]

24· Սամուէլ Անեցի, էջ 109։
25· «Հաւաքումն պատմութեան Վարդանայ վարդապետի լուսաբանեալ», 1862, Վենետիկ, էջ 102։
26· «Հայրենիք», 1926 մայիս, էջ 33, յուլիս, էջ 123։
27· Gelzer, նշուած աշխ., էջ 1004–1005։

1071 թ. Մանազկերտի ճակատամարտը փաստորէն բիւզանդական կայսրութեան կարապի երգը հանդիսացաւ. «Թէեւ նրա (ճակատամարտի – Վ.Մ.) արդիւնքները իրենց բոլոր սարսափներով դեռեւս չէին զգացւում, սակայն Փոքր Ասիայի արեւելեան մասերը կայսրութեան համար ընդմիշտ կորած էին, եւ թափառաշրջիկ թուրքը հին հռոմէական փառքի փլատակների վրայ խփել էր իր վրանը»:[28]

Հայաստանից 7–11–րդ եւ նոյնիսկ 12–13–րդ դարերին կատարուած արտագաղթի առաջմղիչ ուժերից մէկը, թերեւս օտար ներխուժումներից ոչ պակաս զօրութեամբ, կրօնական հակամարտութիւնն էր հայ քաղքեդոնականների եւ հակաքաղքեդոնականների միջեւ: 8–9–րդ դարերում եղան պահեր, երբ դժուար էր կռահել, թէ կողմերից ո՞րն է յաղթելու, որովհետեւ երկուսն էլ յաղթանակի հասնելու համար օգտագործում էին բոլոր միջոցները, այդ թուում նաեւ օտար դաւանակիցների՝ յոյների, վրացիների եւ ասորիների աջակցութիւնը:[29] Սակայն աստիճանաբար հակաքաղքեդոնականութիւնը տեղական եկեղեցական աւանդոյթների շնորհիւ յաղթեց եւ վերածուեց ազգային եկեղեցու: Աւելի ուշ հայ հակաքաղքեդոնական եկեղեցու ազգայնացման հետեւանքով հայ քաղքեդոնականների մօտ գնալով զօրանում է հակառակ երեւոյթը՝ ապազգայնացումը, որը հայ ժողովուրդին մեծ հարուած հասցրեց թէ քանակական եւ թէ բարոյական առումով: Ցանուն իրենց դաւանանքի հայ քաղքեդոնականները բռնում են գաղթի եւ ձուլման ուղին, դադարում իրենց հայ համարել:[30] Անջատուելով ազգակիցներից, նրանք շարժւում են երեք ուղղութեամբ՝ Վրաստան, Բիւզանդիա եւ Ասորիք՝ իրենց դաւանակիցների մօտ: Կորցնելով ոտքի տակ հայրենի հողը, հայ քաղքեդոնականները վերջիններիս հետ տեղափոխւում էին նրանց նախընտրած շարժման վայրերը. վրացիների հետ՝ Բուլղարիա, յոյների հետ՝ Պաղեստին, սիրիացիների հետ՝ Արեւելք: Հայ քաղքեդոնականները նախընտրում էին անգամ Հռոմը, որովհետեւ քաղքեդոնականութիւնը կաթոլիկութեան հետ մերձեցման աւելի շատ աղերսներ էր տեսնում:

Երկրի ներսում իրենց իսկ ազգակիցների կողմից ապազգային դիտուած քաղքեդոնիկ հայ մասսան զգալիապէս խթանեց արտագաղթը: Դեռ Անիի անկումից առաջ սրանք բռնել էին դէպի ռուսական շրջաններ, Վոլգա, Բուլղարիա, Միջին Ասիա ու Կիլիկիա տանող գաղթի ուղին:

Ինչպէս բոլոր ժողովուրդների, այնպէս էլ հայերի մօտ արտագաղթերը յարուցւում էին ժողովրդա–հասարակական հոգեբանութեամբ, որն այն ժամանակներում որոշւում էր կրօնական գործերով, եւ դաւանաբանական իտէալների իրականացմանը զոհաբերւում էր ազգային բարօրութիւնը, կրօնական չահախնդրութիւնները վեր էին դասւում ազգային պատրիոտիկայից: Եթէ դաւանանքի պահանջները հայրենիքում ոտնահարւում

28. Նոյն տեղը, էջ 1010:
29. Н. Марр, Аркаун, Мангольское название христиан, Слб, 1905, с. 5:
30. Նոյն տեղը, էջ 28:

էին, ապա կրօնական բարոյականութիւնը լիովին արտօնում էր թողնել այդպիսի հայրենիքը եւ մեկնել դաւանակից կամ հանդուրժող երկրներ:[31] Կրօնաբարոյական նման մտայնութիւնը լրիվին արդարացնում էր արտագաղթի երեւոյթը նման պարագաներում, այն դարձնում էր հիմնաւորուած պահանջ՝ յանուն «իսկական» քրիստոնէական հաւատի, ընդ որում «իսկականը» իւրաքանչիւր կողմ մեկնում էր իւրովի: Տակաւին Ղազար Փարպեցին էր նման ոգով յանձնարարականներ տալիս. «Այնուհետեւ կա՛մ կեանք, ծառայելով ճշմարիտ հաւատոյն Քրիստոսի, իւր ծնունք առաջին նորոգութեամբ ի ձեռն ամենասուրբ վարդապետութեան նահատակին Գրիգորի եւ նորին զաւակի, եւ կա՛մ թողեալ զաշխարհ՝ գնամք իւրաքանչիւր յօտարութիւն կնաւ եւ որդւոք, ապաւինեալք եւ հաստատեալք ի բուն կենարարի Փրկչին, որ ասէ թէ՝ «Ցորժամ հալածեսցեն զձեզ ի քաղաքէս յայսմանէ՝ փախջիք ի միւսն»:[32]

Հայոց արտագաղթի ուղիները որպէս կանոն համընկնում են առեւտրական մեծ ճանապարհներին՝ Դերբենդի կիրճով դէպի հիւսիս բուլղարների մօտ, դէպի Արեւմուտք՝ Ազովի ծովի մօտ եւ նաեւ՝ դէպի Արեւելք՝ Չինաստան: Մոնղոլական շրջանում Ոսկէ Հորդայով Չինաստան տեղափոխուած քրիստոնեաների մէջ նկատելի թիւ էին կազմում յունադաւան հայերը: Սրանք Միջին Ասիա եւ Չինաստան էին անցնում նաեւ Պարսկաստանի վրայով՝ թէ մոնղոլների ժամանակ եւ թէ մինչ այդ: Խնդիրն այն է, որ Պարսկաստանը չէր հանդուրժում հայ քաղքեդոնականներին իրեն ենթակայ Հայաստանում՝ Բիւզանդիային սահմանակից լինելու հետեւանքով, բայց նրանց լիովին ազատութեամբ էր օժտում ոչ միայն իր տարածքով շարժուելու Միջին Ասիա ու Չինաստան, այլեւ հաստատուելու իր իսկ արեւելեան շրջաններում: Այդ առիթով Ցովհաննէս Դրասխանակերտցին գրում է. «Ընդ որ զօրացեալ Խոսրովայ՝ յաւէտ իմն հաճոյանայր Սմբատ յաչս նորա, եւ բազմօք ոմամբք, ընծայական օժտութեամբք զնա պատուասիրեալ՝ տա նմա զմարզպանութիւն Վրկանայ: Իսկ Սմբատայ երթեալ հասեալ յաշխարհն յայն՝ գտանէ անդ զգիտեալ ազգս ի Հայաստանեայց եւ բնակեցուցեալս ի Թուրքեստան կողմանէ մեծի անապատին, որ Սագաստան անուանի, զլեզու իւրեանց մոռացնեալ եւ դպրութիւն նուազեալ յոյժ: Որոց եւ տեսեալ զՍմբատ՝ յաւէտ իմն խրախ լինէին, եւ ի հրամանէ նորան դարձեալ աշակերտեալ ըստ հայերէն հագագաց սիղոբայիցն զլեզուն նորոգէին. եւ ասեալ դպրութիւն հայերէն՝ հաստատէին ի հաւատս: Եւ ապա զերէցսն ի նոցունց իսկ՝ Աբէլ անուն, եպիսկոպոս նոցա հրամայէ կացուցանել մեծի հայրապետին մերոյ Մովսէսի: Եւ այսպէս վիճակի մեծի աթոռոյ Սրբոյն Գրիգորի ի հեռաստան երկրի զնոսա կազմէ մինչեւ ցայսօր ժամանակի»:[33]

Ուրեմն, 10–րդ դարում Պարսից պետութեան հիւսիս–արեւելեան շրջաններում գոյութիւն ունէր հայկական եկեղեցական թեմ, որը ենթարակւում էր

31. Նոյն տեղը, էջ 47:
32. «Վասպար Փարպեցւոյ պատմութիւն հայոց», Թիֆլիս, 1904, էջ 50:
33. «Ցովհաննէս Կաթողիկոսի Դրասխանակերտցւոյ Պատմութիւն Հայոց», Թիֆլիս, 1912, էջ 69–70:

ազգային եկեղեցուն։ Այդ ժամանակների մոտերքը հայկական եկեղեցի կար Խորասանում։[34] Վրկանաց երկիր (Հիւսիսային Պարսկաստան) հայերը աքսորուել էին բիւզանդական սահմաններից ու ասորական երկրամասից եւ նրանք բոլորը քաղքեդոնականներ էին, որոնց գոյութիւնը իր արեւմտեան սահմաններում Պարսկաստանը համարում էր վտանգաւոր։[35]

Հաւանաբար, 9–11-րդ դարերում հայկական արտագաղթերի առաջնեկները հայ քաղքեդոնականներն էին, եւ քանի դեռ սրանք չէին կորցրել իրենց կապերը Հայրենիքի հետ, նրանք շարունակում էին խաղաղ միջնորդի դեր՝ իրենց հայրենակիցներին Զինաստանի հետ ծանօթացնելու գործում։

Հայկական արտագաղթերը չընդհատուեցին նաեւ սելջուկեան եւ մոնղոլական ներխուժումների միջեւ ընկած ժամանակաշրջաններում, 11–13-րդ դարերում։ Այդ շրջանում կատարուած արտագաղթերը նկատելիօրէն պատճառաբանւում էին նաեւ առեւտրատնտեսական նկատառումներով։ Հայաստանից տարբեր երկրներ առեւտրական ուղիներով ընթացող բնակչութեան տեղաշարժերի ուղեցոյցը նաեւ հայ վաճառականութեան արտաքնայ գործունէութիւնն էր, երբ նրա ետեւից, նրա բացած ուղիներով երկրից հեռանում էին նաեւ արհեստաւոր ու երկրագործ դասերը եւ հաստատւում նրա իսկ ընտրած տեղերում՝ իրենց գործունէութեան կիրարկման առաւել նպաստաւոր պայմաններ գտնելու ակնկալութեամբ։

13-րդ դարի 30-ական թուականները Հայաստանի համար բնորոշ են նաեւ հայկական նոր արտագաղթերով, որոնք իրենց ընդգրկմամբ եւ ծաւալով գերազանցում էին բնակչութեան՝ անգամ սելջուկեան շրջանի արտահոսքին։ Դա արդէն անմիջականօրէն կապուած էր Հայաստանում մոնղոլական արշաւանքների հետ։ Մոնղոլների աշխարհաւեր եւ տարածածաւալ յաջողութեան պատճառը ոչ այնքան նրանց ուժի մէջ էր, որքան նրանց նուաճած երկրների ներքին թուլութեան եւ մասնատուածութեան մէջ։ Մոնղոլական զօրաբանակը Զարմաղանի գլխաւորութեամբ, բաժանուելով մի քանի մասի, սկսեց Հայաստանի նուաճումը, որը նրանք իրականացրին 1236–1243 թուականների ընթացքում եւ իրականացրին ամենադաժան միջոցներով։ «Անդ էր տեսանել զսուրս յանխնայ կոտորել զարս եւ զկանայս, զերիտասարդս եւ զմանկունս, զծերս եւ զպառաւունս, զեպիսկոպոսունս եւ զերիցունս, զսարկաւագունս եւ զդպրիս։ Մանկունք ստնդիայք զքարի հատեալ, եւ կուսանք գեղեցիկք խայտառակեալք եւ գերեալք...։

Լցաւ երկիրն ամենայն դիակամբք մեռելոց... երկիր թափուր մնաց ի բնակչաց իւրոց, եւ շրջէին ի նմա որդիք օտարաց»,– բողոքում է դէպքերին ականատես Կ. Գանձակեցին։[36] Այնուհետեւ հարկադրման եւ ռազմական նկատառումներով 1254 թ. մոնղոլները Հայաստանում անցակցրին աշխարհագիր, զանազան հարկեր նշանակելով 16–60 տարեկան մարդկանց

34. Ն. Մառ, նշուած աշխ., էջ 49։
35. Նոյն տեղը, էջ 50։
36. Կիրակոս Գանձակեցի, Պատմութիւն Հայոց, Երեւան, 1961, էջ 239–240։

վրայ, միաժամանակ երկրի ընդերքի ամբողջ հարստութիւնը վերցնելով իրենց ձեռքը։

Մոնղոլների ռազմական հատուածները, նրանց օրով գնալով սաստկացող բռնութիւններն ու հարկերը, ֆիզիկական ոչնչացման վտանգը խթանեցին բնակչութեան փախուստն ու տեղաշարժը Հայաստանից։ Միաժամանակ մոնղոլներն իրենք եւս իրականացնում էին հայ բնակչութեան արտագաղթեցում։ Ոսկէ Հորդայի խաները, օրինակ, Արեւմտեան իլխանութեան դէմ մղած երկարատեւ պայքարում, որը շարունակուեց գրեթէ մի ամբողջ հարիւրամեակ (1252–1350 թթ.), քանիցս կատարեցին հայերի բռնագաղթեցումներ եւ նրանց բնակեցում Ոսկէ Հորդայում՝ տեղում արհեստների ու առեւտրի զարգացումը խթանելու համար։ Հայ բնակչութեան մի մասը հիմնաւորուեց Վոլգայի ափերին, իսկ 13-րդ դարի վերջերին – 14-րդ դարի սկզբներին հեռացաւ այնտեղից՝ սկզբում անցնելով մերձազովեան շրջաններ, իսկ 14-րդ դարի 30-ական թուականներին՝ Ղրիմ։ Հայաստանից հեռացած բնակչութեան մի մասն էլ ուղղութիւն վերցրեց դէպի գաղթի աւանդական երկրներ՝ Փոքր Ասիա, Բալկաններ, մերձաւոր արեւելեան եւ հիւսիսկովկասեան շրջաններ, ինչպէս նաեւ Էգէեան կղզիներ։

Նայած քաղաքական իրավիճակին եւ առեւտրատնտեսական հանգամանքներին՝ հայերը արտագաղթում էին ոչ միայն բուն Հայաստանից. նրանք վերաբնակւում էին նաեւ իրենց կողմից խիտ բնակեցուած մի վայրից միւսը։ 14–17-րդ դարերին ղրիմահայ գաղութը այն կապող օղակն էր, որի վրայով հայկական գաղթականական շատ համայնքներ անցնում էին Մոլդովա, արեւմտաուկրաինական եւ լեհական, ինչպէս նաեւ ռումինա-հունգարական տարածքներ։ 14-րդ դարի երկրորդ կէսին, Կիլիկեան հայկական պետութեան անկման եւ լեւանտեան առեւտրի վերելքի կապակցութեամբ, առեւտուր, որն արդէն ընթանում էր սեւծովեան նեղուցներով, պատկառելի թուով հայեր անցան միջերկրածովեան երկրներ, Ղրիմ, Իտալիա եւ այլուր։

Հայկական արտագաղթերին առիթ ու պատճառ են դարձել նաեւ այնպիսի գործօններ, ինչպիսիք էին տարերային աղէտները, հողագործութեան, արհեստների եւ առեւտրական ձեռնարկութեան զարգացման համար երկրում ամենատարրական պայմանների վերացումը եւ այլն։ Այդ պատճառով էր նաեւ որ արտագաղթն ընդգրկում էր բնակչութեան բոլոր խաւերն անխտիր՝ երկրագործից մինչեւ խոշոր վաճառականը, որոնց առաջացած իրավիճակը դնում էր գրեթէ միեւնոյն սոցիալական աստիճանի վրայ՝ այնպիսի մարդկանց դրութեան մէջ, որոնք զրկուել էին գոյամիջոցներից։

17-րդ դարի սկզբներին Թուրքիան ու Հայաստանն ալեկոծած ջելալիների շարժումը եւ ծայր առած տեւական ու մահաշունչ սովը ստիպեցին տասնեակ հազարաւոր հայերի, մանաւանդ Արեւմտեան Հայաստանից, նորից դիմել օտարութեան։ Հայաստանի բազմաթիւ գաւառներն ընդգրկած այս շրջանի արտագաղթերը հիմնականում ընթանում էին դէպի Արեւմուտք՝ Արեւմտեան Ուկրաինա, Լեհաստան, Ռումինիա, Մոլդովա, Ղրիմ, Պոնտոս եւ այլուր։ Առաքել Դաւրիժեցին այս առթիւ գրում է. «Արդ՝ եթէ յայսմ պատճառէ եւ թէ

կանխաւ պատմեալ մեծ սովին եւ Ջալալոց պատճառէն, ամենայն ազգն Հայոց ելեալ վտարանդիք եղեն յիւրաքանչիւր տեղաց, ի հայրենի բնակութեանց եւ յաշխարհաց, եւ տարագէմ գնացեալ ընդդէմ երեսաց՝ ցիր եւ ցան եղեալ սփռեցան ընդ ամենայն յաշխարհ, ի Կիպրոս, ի Կոստանդուպոլիս, ի քաղաքս, որք չուրջ են զնովաւ, յՈւռումէլի, ի Բուղդան, յերկիրն Իլախաց, ի կղզին Կաֆայու, ի ծովեզերսն Պոնտոսի»:[37] Ջալալիների սարսափից փախած հայերի թիւը շատ էր մանաւանդ Ղրիմում, ուր նրանք անցել էին Պոնտոսի եւ Պոլսի վրայով՝ 1605 թուականին:[38]

Թուրք-պարսկական պատերազմների շրջանում հայ բնակչութեան արտագաղթերը պարբերական բնոյթ էին ընդունել, իսկ 17-րդ դարի սկզբին դրանց հետեւանքով ուղղակի ամայացան մի շարք գաւառներ: Շահ-Աբասի զօրքերը բռնգաղթեցրին հարիւր հազարաւոր հայերի եւ նրանց քշեցին Պարսկաստանի խորքերը: Դա մեծ սուրգիւնի ժամանակաշրջանն էր: Բայց հենց այդ հայերն էին, որ շուտով հիմնեցին նշանաւոր Նոր Ջուղան եւ մի քանի տասնեակ հայկական գիւղեր բուն Պարսկաստանում եւ Պարսկահայքում: Տասնամեակներ անց տնտեսապէս զօրացած պարսկահայ վաճառականութեան ծաւալած գործունէութեան հետեւանքով Հնդկաստան գաղթած հայերն էին, որ սկզբնաւորեցին եւ տնտեսական ու ազգային մշակութային հզօր ազդակ հաղորդեցին հնդկահայ գաղթօջախներին:

18-րդ դարը հայ ժողովուրդի պատմութեան մէջ նշանաւոր էր նաեւ հայ բնակչութեան տեղաշարժերով, ընդ որում՝ ոչ միայն բուն Հայաստանից, այլեւ այլ երկրներից: Ցատկապէս աչքի էր ընկնում հայ բնակչութեան ներհոսքը ռուսական կայսրութեան տարածքները՝ Հիւսիսային Կովկաս, Աստրախան, Մոսկուա, Պետերբուրգ, Նովոռոսիա: Ռուսաստան գաղթող այս հայութեան մի զգալի մասը գալիս էր պարսկական եւ թուրքական շրջաններից: Այս հարիւրամեակում հայ բնակչութեան արտագաղթը կապուած էր ոչ միայն Արեւելեան եւ Արեւմտեան Հայաստանի քաղաքական ու սոցիալ-տնտեսական ծանր դրութեան հետ. այն անմիջական աղերսներ ունէր նաեւ Ռուսաստանի, Թուրքիայի եւ Պարսկաստանի արտաքին քաղաքական շահախնդրութիւնների, նրանց միջեւ տեղի ունեցած ռազմական հակամարտութիւնների հետ:

18-րդ դարի 30-40-ական թուականներին, նոյն դարի 20-ական թուականների երկրորդ կէսից հայ ազգագրական շարժումների անկմանը զուգընթաց, թուրք-պարսկական ճնշման սաստկացման պայմաններում բազում հայ ընտանիքներ հարկադրուած էին թողնել իրենց հայրենի օջախները եւ վերաբնակուել նորերես Ռուսաստանին անցած կովկասեան տարածքները: Դրան մեծապէս նպաստում էր հայ ժողովուրդի նկատմամբ Ռուսաստանի կողմից վարուող հովանաւորական քաղաքականութիւնը, որի սկիզբը դեռ դրել էր Ալեքսէյ Միխայլովիչ Ռոմանովը՝ 17-րդ դարում: Հայաստանից եւ Անդրկովկասից կատարուած այդ գաղթականութիւնների հետեւանքով Կովկասում

37. «Պատմութիւն Առաքել վարդապետի Դաւրիժեցւոյ», Վաղարշապատ, 1896, էջ 88:
38. Գրիգոր Դարանողցի, ժամանակագրութիւն, Երուսաղէմ, 1915, էջ 51:

սկզբնաւորուեցին Կիզլեարի, Մոզդոկի, Սուրբ Խաչի հայկական գաղութները:

Հայ բնակչութեան մեծ տեղաշարժ կատարուեց 1768-1774 թթ. ռուս-թուրքական պատերազմից յետոյ: Որպէս հետեւանք պատերազմին յաջորդած այն դիւանագիտական պայքարի, որ մղւում էր Թուրքիայի եւ Ռուսաստանի միջեւ Ղրիմի թերակղզու համար, 1778 թ. հայերը դուրս բերուեցին Ղրիմից: 1779 թ. նրանք Դոնի ափերին հիմնադրեցին նշանաւոր Նոր Նախիջեւան քաղաքը՝ իր շրջակայ գիւղերով: Շատ չանցած նոյն բախտին արժանացան Բեսարաբիայի հայերը. այս անգամ արդէն 1787-1791 թթ. ռուս-թուրքական պատերազմից յետոյ: Ռուսական կառավարութեան նիւթական օգնութեամբ նրանք հեռացան Թուրքիային ենթակայ տարածքներից եւ 1792 թ. հիմնադրեցին Գրիգորիոպոլ հայկական գաղութ-քաղաքը:

Գրեթէ ամբողջ 18-րդ դարում հայերը մեծ ու փոքր գաղթականական հոսանքներով Անդրկովկասից եւ Պարսկաստանից տեղափոխւում էին Աստրախան: Այդ վերաբնակումների հիմքում առեւտրատնտեսական գործունէութեան համար նպաստաւոր պայմանների առկայութիւնից զատ ընկած էին նաեւ Ռուսաստի հետ քաղաքական մերձեցման, նրա օգնութեամբ թուրք-պարսկական լծից ազատագրման ակնկալութիւնները: Միաժամանակ նշուած ժամանակաշրջանում հայերի թիւը գնալով շատանում էր Մոսկուայում եւ Պետերբուրգում:

Իւրաքանչիւր հարիւրամեակ հայկական արտագաղթերում մտցնում էր իր «ուղղումներն ու կերպափոխութիւնները», երեւոյթի էութիւնը, սակայն, թողնելով նոյնը՝ Հայաստան աշխարհի մարդաթափ դառնալը: Այս առումով բացառութիւն չկազմեց նաեւ 19-րդ դարը, թէեւ պիտի նշել, որ այս հարիւրամեակում եղան նաեւ պահեր, երբ կատարուեց հակառակ շարժընթացը՝ Հայաստան վերադարձն իր նախնի բնակիչները՝ պարսկահայերը, որ հետեւանք էր 1826-1828 թթ. ռուս-պարսկական պատերազմի: Նոյնը չի կարելի ասել 1830 թ. արեւմտահայերի՝ դէպի Արեւելեան Հայաստան եւ Անդրկովկասի մի շարք շրջաններ կատարած գաղթի մասին, որովհետեւ այդ գաղթի պատճառով ամայանում էին արեւմտահայկական շրջանները՝ արտաքուստ նոյնական թուացեալ երեւոյթները իրենց էութեամբ բոլորովին այլ հետեւանքներ էին թողնում:

Խնդիրն այն է, որ այս հարիւրամեակում տեղի ունեցած չորս ռուս-թուրքական եւ երկու ռուս-պարսկական պատերազմները անմիջական ազդեցութիւն էին գործում նաեւ հայ բնակչութեան տեղաշարժների վրայ՝ թէ արտագաղթելու եւ երկրում մնալու եւ թէ Հայաստանի մի հատուածից միւս վերաբնակուելու առումով: Այս հանգամանքը պայմանաւորուած էր նրանով, թէ ռուսական զէնքի եւ նրան նեցուկ դարձած հայ կամաւորական ջոկատների յաղթանակը կամ ժամանակաւոր անյաջողութիւնները քաղաքական ինչպիսի իրաւունքներ էին ստեղծում բուն Հայաստանում՝ առաջին հերթին ժողովուրդի ֆիզիկական գոյութեան ապահովուածութեան, ապա նաեւ նրա գոյատեւման տնտեսական միջոցների հնարաւորութեան առումով: Եւ այսուհանդերձ՝ անցած հարիւրամեակում Հայաստանից կատարուած արտագաղթերի մէջ

առանձնացնենք երկու երեւոյթ՝ պանդխտութիւնը եւ 1890-ական թուականների ջարդերի հետեւանքով ծայր առած փախստականութիւնը:

Պանդխտութեանը ծնունդ տուողն ու սնուցողը տնտեսական ծանր վիճակն էր: Սակայն այդ ընդհանուր պատճառը նոյնական չէր Արեւելեան եւ Արեւմտեան Հայաստանի համար: Վերացական առումով վերցրած՝ նիւթական ծանր պայմանները ստիպում էին հայ ժողովուրդի թէ մէկ եւ թէ միւս հատուածին դիմել պանդխտութեան՝ ընտանիքի գոյատեւման համար միջոցներ որոնելու եւ երկիր վերադառնալու անհողդողդ վճռով: Բայց որպէս կանոն այդ վճիռը, պարագաների հարկադրմամբ, մնում էր անկատար:

Արեւմտահայկական գաւառներում, տնտեսական ծանր պայմաններից առաւել, պանդխտութիւնը կապուած էր քաղաքական անապահով վիճակի, այն արհաւիրքների ու կոտորածների հետ, որոնք դարձել էին արեւմտահայ գիւղացիութեան կեանքի առօրեայ ուղեկիցը: Այդ պատճառով էլ արեւմտահայոց պանդխտութիւնը մեծ մասամբ ստանում էր փախուստի բնոյթ՝ որպէս թուրք հարկահաններից եւ քրտական աւազակային յարձակումներից փրկուելու միջոց: Այս իրողութեան մէջ էին թաքնուած արեւմտահայ պանդխտութիւնը արդարացնող պատճառները, որոնք, սակայն, ամենեւին տարածելի չէին արեւելահայոց պանդուխտների նկատմամբ, որտեղ որպէս պանդխտութեան շարժառիթ մնում էին տնտեսական ծանր պայմանները, ինչպէս նաեւ օտար ափերում նիւթապէս բարւօքուելու ձգտումը:

Սակայն երկու դէպքում էլ պանդխտութիւնը մնում էր իբրեւ երկրաւոր մի շարժում, որը իր յարաճուն միտումների մէջ սպառնում էր ամայացնել հայկական ամբողջ գիւղեր եւ գաւառներ: Պանդխտութիւնը սկսուեց հիմնականում 19-րդ դարի 30-40-ական թուականներին՝ Ռուսաստանում եւ Թուրքիայում ապրանքադրամային յարաբերութիւնների զարգացմանը համաքայլ, երբ նրանց նշանաւոր քաղաքներում առաջանում էր դրսեկ էժան ֆիզիկական աշխատանքի կիրառման պահանջ: Պանդխտութեան դիմած հայերը Կ. Պոլսում, Օդեսայում, Սեւաստոպոլում, Պաքւում, Բաթումում, Մարսէլում կատարում էին ամենածանր, սեւ ու չարքաշ աշխատանքները՝ ինչ որ չափով ապրուստի միջոցներ ճարելու յոյսով, որը որպէս կանոն ի դերեւ էր ելնում, եւ պանդուխտների մեծամասնութիւնն այլեւս չէր վերադառնում հայրենիք, իսկ այնտեղ թողած նրանց ընտանիքները պարզապէս քայքայւում էին: Հայրենիք վերադառնալու առթիւ Կ. Պոլսի պատրիարքի եւ այլոց յորդորները պարզապէս մնում էին ձայն բարբառոյ յանապատի:

1877-1878 թուականից յետոյ պանդխտութիւնն աւելի մեծ չափեր ընդունեց, ընդգրկելով Վանի, Բաղէշի, Տիգրանակերտի, Քարաբերդի, Բալուայի, Քղիի, Երզնկայի, Կարինի եւ այլ հայկական գաւառներ: 1877 թ. միայն Վանից Կ. Պոլիս անցած հայերի թիւը հասնում էր 20 հազարի:[39] Տարիքային սանդղակով պանդուխտները բնակչութեան ամենաառողջ եւ

39. «Մշակ», 1877, թիւ 61:

աշխատունակ հատուածն էին կազմում՝ հիմնականում 20-25 տարեկան տղաներ, հազուագիւտ դէպքերում՝ 35 տարեկան:

1877-1878 թթ. ռուս-թուրքական պատերազմից յետոյ Կարսի մարզի կազմուելով՝ աննախընթաց չափեր է ընդունում արեւմտահայ այլ շրջանների բնակչութեան ներհոսքը մարզ, ինչպէս նաեւ նրա վրայով տեղաշարժը դէպի Արեւելեան Հայաստան, Կովկաս եւ այլուր:

Շատ պանդուխտներ Բաթումի եւ Կ. Պոլսի վրայով անցնում էին Մարսէլ, իսկ այնտեղից էլ՝ Ամերիկա: 20-րդ դարի սկզբներին Ամերիկա եւ Կանատա գաղթող հայերի մէջ սկսում են նկատելի թիւ կազմել նաեւ արեւելահայերը: Այս շրջանում արդէն չկար հայկական որեւէ գաւառ, որը զերծ մնար պանդխտութիւնից. այն դարձել էր համազգային աղէտ թէ իր ընդգրկմամբ եւ թէ մանաւանդ վարակիչ հետեւանքներով: Եթէ Զանգեզուրից եւ Ղարաբաղից պանդուխտները հիմնականում մեկնում էին Բաքու կովկասեան եւ միջինասիական այլ քաղաքներ, ապա Շիրակից 1908 թուականին սկսուեց բնակչութեան մեծ արտահոսք դէպի Ամերիկա, արտահոսք, որը շարունակուեց մինչեւ 1914 թ.: Դրա հետեւանքով տասնեակ հազարաւոր շիրակցիներ տեղափոխուեցին Ամերիկա: Նրանք Ամերիկա էին մեկնում մեծ զրկանքների գնով, հիմնականում Մերձբալթիայի վրայով. գնացքով հասնում էին մինչեւ Լիէպայա նաւահանգիստը, իսկ այնտեղից մեկնում Ամերիկա:

Թուրքական կառավարութիւնն անցեալ դարի վերջերից միտում է հայ պանդխտութիւնը ծառայեցնել իր հակահայկական պլաններին. 1895-1896 թթ. կառավարութիւնը ջանում է իւրովի օգտագործել պանդխտութիւնը՝ Հայաստանը առանց հայերի թողնելու իր ծրագրերի կենսագործման համար: 1896 թ. սուլթանական կառավարութիւնը ընդունում է մի որոշում, ըստ որի Թուրքիայից հեռանալ ցանկացող հայերը պարտադիր կարգով՝ երաշխաւորով եւ պատրիարքարանի վաւերացմամբ, պէտք է ստորագրութիւն տային այլեւս Թուրքիա չվերադառնալու պարտաւորութիւն ստանձնելու մասին: Այդ ստորագիր փաստաթղթից երկու օրինակ յանձնւում էր իրաւասու յանձնաժողովին: «.Այս պայմանով գաղթելու արտօնացեալներուն տրուելու անձագրին մէջ բացորոշօրէն դրուելու է սա խօսքը, թէ ետ այսորիկ պիտի չվերադառնան Օսմանեան երկիրները»:[40] Միաժամանակ, Թուրքիայից հեռացող հայերը համապատասխան մարմիններին այդ թւում նաեւ Կ. Պոլսի Հայոց պատրիարքարանին պարտաւորագրեր էին տալիս Թուրքական հպատակութիւնից հրաժարուելու մասին:

90-ական թուականների ջարդերը հարկադրեցին տասնեակ ու տասնեակ հազարաւոր հայերի դառնալ փախստականներ: Սրանց մի զգալի մասը, մարդկային մեծ կորուստների գնով, հասաւ Կովկաս, Բաթում եւ Սեւ Ծովի հիւսիս-արեւելեան եզերքները: Արեւմտահայաստանից հայերի արտագաղթը շարունակուեց ընդհուպ մինչեւ առաջին համաշխարհային պատերազմը եւ Մեծ

40. «Մշակ», 1896, թիւ 121:

Եղեռնը: 1915–1920 *թթ. հարիւր հազարաւոր հայ փախստականներ, որոնց յաջողուել էր փրկուել կոտորածից, շարժուեցին երկու ուղղութեամբ՝ Մերձաւոր Արեւելք, արաբական երկրներ եւ Արեւելեան Հայաստան ու Կովկաս՝ իսկ վերջինիս վրայով ուկրաինական եւ ռուսական շրջաններ*:

EXODUS OF THE ARMENIAN PEOPLE IN THE VIth-XIXth CENTURY

VARDGES MICHAELIAN

SUMMARY

As from the early Middle Ages the history of Armenia has become that of the many Armenians who emigrated from their Motherland. This requires deep study of the Armenian exodus, which throws light upon the phenomenon of Armenian settlements abroad.

The reason for the Armenian people's exodus can be followed both through external political situations and also socio-economic developments in Armenia itself.

The history of the Armenian exodus and the emergence of settlements began with the adoption of Christianity. Ideological unity is also a mainspring for the creation and existence of any settlement. For the Armenian settlements this kind of a mainspring was the Christian doctrine and the Church. Only after the adoption of Christianity did streams of Armenian refugees create united and viable settlements.

One of the main reasons why the Armenian people migrated was the invasion of foreign tribes into Armenia. Consequently, as a rule, groups migrated in their largest numbers during invasions by Arabians, Byzantines, Turks, Tartar-Mongolians, etc.

The exodus of Armenian people in XVIIIth to the XXth century was caused by the anti-Armenian policy composed and implemented by the Ottoman Government of Turkey in West Armenia. Besides foreign invasions there were a series of other reasons for this, such as vulnerable situations in the economy, religious contradictions, etc.